

## Ուղիղ, հատված, ճառագայթ, բեկյալ գծեր: Մաս 3

**Ուղիղը** ծայրակետեր չունի:

**Ուղիղ-չունի** ո՛չ սկիզբ, ո՛չ էլ վերջ:

**Օրինակ՝** հորիզոնը:


Գծապատկերով նշում ենք նրա մի մասը:

**a ուղիղ**

a

---

**Հատվածը** ուղղի մաս է: Այն ունի 2 ծայրակետ:



**Հատվածը** ունի սկիզբ, ունի վերջ:

- Հատվածը գծելու համար նշենք A և B կետեր, այնուհետև օգտագործելով քանոնը, դրանք միացնող գիծ տանենք: Կստանանք A և B ծայրակետերով հատված: Ասում ենք AB հատված:
- Հատվածի ծայրակետերը նշանակում են լատիներեն մեծատառերով՝ A, B, C, D, ...

Գծապատկերով նշում ենք հատվածն ամբողջությամբ:

**AB հատված**



Եթե AC հատվածի երկարությունը 3 սմ 2մմ է, իսկ BC հատվածինը՝ 8 սմ 4 մմ, ապա AB հատվածի երկարությունը կլինի՝  
 $|AB| = 3 \text{ սմ } 2 \text{ մմ} + 8 \text{ սմ } 4 \text{ մմ} = 11 \text{ սմ } 6 \text{ մմ}$



**Ճառագայթը** ուղղի մաս է: Այն ունի միայն մեկ ծայրակետ, որը նրա սկզբնակետն է:

Գծապատկերով նշում ենք նրա մի մասը:


**Ճառագայթը** ունի սկիզբ, բայց չունի վերջ:

**A ճառագայթ**




**Օրինակ՝** արևի ճառագայթը:

**Բեկյալ գծեր**



Հաջորդաբար իրար միացած հատվածները կազմում են մի պատկեր, որը կոչվում է **բեկյալ գիծ**, իսկ այդ հատվածների երկարությունների գումարը կոչվում է **բեկյալ գծի երկարություն**:



Եթե AB հատվածի երկարությունը 3 սմ 2մմ է, BC հատվածինը՝ 4 սմ 3 մմ, իսկ CD հատվածինը՝ 5 սմ 4 մմ, ապա **բեկյալ գծի երկարությունը** կլինի՝

$$3 \text{ սմ } 2\text{մմ} + 4 \text{ սմ } 3 \text{ մմ} + 5 \text{ սմ } 4 \text{ մմ} = 12 \text{ սմ } 9 \text{ մմ}$$

### Առաջադրանքներ


1. AC հատվածի երկարությունը 11 դմ 5սմ է, BC հատվածինը՝ 24 դմ 8սմ: Գտիր AB հատվածի երկարությունը:




2. AB հատվածի երկարությունը 39 սմ 4 մմ է, AC հատվածը՝ 9 սմ 3 մմ: Գտիր CB հատվածի երկարությունը:




3. Որքա՞ն է CD հատվածի երկարությունը, եթե  $|AD|=228$  սմ,  $|AB|=45$  սմ,  $|BC|=85$  սմ:



4. Հաշվիր BC հատվածի երկարությունը, եթե  $|AD|=336$  մմ,  $|AB|=65$  մմ,  $|CD|=131$  մմ:



5. Հաշվեք բեկյալ գծի երկարությունը, եթե AB հատվածի երկարությունը 11 սմ 8 մմ է, BC հատվածինը՝ 13 սմ 2 մմ, իսկ CD հատվածինը՝ 15 սմ 5 մմ:



6. AC հատվածի երկարությունը 14սմ 3մմ է, BC հատվածինը՝ 32 սմ 9 մմ: Գտիր AB հատվածի երկարությունը:




7. AB հատվածի երկարությունը 39սմ 5մմ է, CB հատվածը՝ 28սմ 4մմ: Գտիր AC հատվածի երկարությունը:



8. Որքա՞ն է CD հատվածի երկարությունը, եթե  $|AD|=212$  սմ,  $|AB|=34$  սմ,  $|BC|=70$ սմ:



9. Հաշվեք բեկյալ գծի երկարությունը, եթե AB հատվածի երկարությունը 19սմ 4մմ է, BC հատվածինը՝ 21սմ 7մմ, իսկ CD հատվածինը՝ 23սմ 5մմ:



10. Մի րելի սովորողներ, այժմ ինքների կազմեք նմանատիպ առաջադրանքներ: